ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼԻ ՔՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒ ԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԵՅԽ ՍԱԻԴԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ 1925 Թ.

ՍԱՅԻՅԱՆ Ա. Ս.

1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարից հետո անխուսափելի դարձած Օսմանյան կայսրության բաժանման հեռանկարը խթանեց քրդերի ազգային-ազատագրական շարժումը: Արտասահմանում և Ստամբուլում ստեղծվեցին կոմիտեներ, որոնց նպատակն էր քրդական հարցի լուծումը: Դրանցից էր Կահիրեում Սուրեհյա Բադրխանի ստեղծած «Քուրդիստանի անկախության կոմիտեն», որի ներկայացուցիչ Շերիֆ փաշան ուղարկվեց Փարիզ՝ դաշնակիցների մոտ քրդերի իրավունքները պաշտպանելու համար: Սակայն նա չուներ հարկ եղած չափով հեղինակություն, իսկ հայկական պատվիրակությունը ավելի կազմակերպված էր և ավելի մեծ հնարավորություն ուներ սատարելու նրա պահանջները: Այս պարագայում Շերիֆ փաշան ստիպված էր միանալ հայկական պատվիրակությանը: 1920 թ. օգոստոսին 10-ին կնքվեց Սևրի հաշտության պայմանագիրը, որը նախատեսում էր Օսմանյան կայսրության արևելյան հողերի վրա ստեղծել ազատ և անկախ Հայաստան և Քուրդիստան. Սև ծովից Շատախ և Մոկս, ինչպես նաև Օլթիից Երզնկան ներառյալ՝ պետք է մտնեին Հայաստանի Հանրապետության կազմի մեջ, իսկ դրանից հարավ ընկած հողերում ստեղծվելու էր Քուրդիստանը:

Ապագա Քուրդիստանում ղեկավար դիրք գրավելու համար պայքարում էին ինչպես Շերիֆ փաշան, այնպես էլ Ստամբուլում հիմնված «Քուրդիստանի վերածնության ընկերությունը»՝ Աբդուլ-Կադիրի և Աբդուռահման Հաքյարիի ղեկավարությամբ: Սակայն 1919 թ. կեսերին Կենտրոնական Անատոլիայում սկսված Միլլի շարժումը՝ Մուսթաֆա Քեմալ փաշայի գլխավորությամբ, ինչպես նաև բոլշևիկյան Ռուսաստանի առաջխաղացումը Հարավային Կովկասում, նոր իրողությունների առջև կանգնեցրին քրդական շարժման առաջնորդներին: 1919 թ. հունիսի 23-ից օգոստոսի 7-ը Էրզրումում կայացավ Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ընկերության կոնգրեսը: Իսկ 1919 թ. սեպտեմբերի 4-12-ը Սվազում կայացավ Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության ընկերությունների համաթուրքական կոնգրեսը, որին մասնակցեց 33 պատգամավոր: Կոնգրեսն ընտրեց նոր ներկայացուցչական կոմիտե՝ 16 հոգուց բաղկացած խորհրդարան, կրկին Մուսթաֆա Քեմալի գլխավորությամբ:

Օսմանյան խորհրդարանը 1920 թ. հունվարի 28-ին ընդունեց «Ազգային ուխտը», որը հռչակեց Թուրքիայի անկախության և ամբողջականության սկզբունքը՝ Մուդրոսի զինադադարի ստորագրման պահին գոյություն ունեցած սահմաններում, և այլ դրույթներ: Սակայն Անտանտի զորքերը 1920 թ. մարտի 16-ին գրավեցին Կ. Պոլիսը, և օսմանյան խորհրդարանը ցրվեց: Այդ պայմաններում Սվազի ներկայացուցչական կոմիտեն որոշում ընդունեց Անկարայում նոր մեջլիս հրավիրելու մասին: 1920 թ. ապրիլի 23-ին Անկարայում գումարվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողո-

վը՝ ԹԱՄԺ-ը, որն իրեն հռչակեց որպես միակ օրինական իշխանություն: Մայիսի 3-ին ԹԱՄԺ Մուսթաֆա Քեմալի գլխավորությամբ ընտրեց 11 մարդուց բաղկացած կառավարություն:

Սկզբնական շրջանում, քանի դեռ քեմալական շարժումը թույլ էր, Քեմալը առերես սիրաշահում էր քրդերին, սակայն շատ ժամանակ չանցած՝ 1920 թ. վերջերից և 1921 թ. սկզբներից, երբ քեմալականների դիրքերը սկսեցին ամրապնդվել, նրանք ցույց տվեցին իրենց իրական՝ ազգայնամոլ դեմքը: Քեմալականները քրդերին հայտարարեցին լեռնային թուրքեր, փակեցին քրդական թերթերը, դպրոցներն ու ակումբները: Քուրդ ազգայնական գործիչների նկատմամբ առաջին հալածանքները սկսվել էին դեռ 1919-ին: Նույն թվականի հուլիսին Դիարբեքիրում տեղակայված 13-րդ կորպուսի հրամանատարին Քեմալը հրամայեց ձերբակալել Ստամբուլից Քուրդիստան մեկնած Ջելյադեթ, Քյամրան և Էկրեմ Բադրխաններին: Եվ միայն այդ հրամանատարի անվճռականությունը, որը սպասում էր սուլթանական կառավարության սանկցիային, ինչպես նաև Խարբերդի վալի Գալիբ Ալի բեյի օգնությունը փրկեցին նրանց ձերբակալությունից[1]: Քրդերին սկսեցին մեղադրել նաև անգլիացիներին աջակցելու մեջ, ինքը՝ Քեմալը, հայտարարում էր, թե անգլիացիները, ըստ քրդերի հետ պայմանավորվածության, նրանց, որպես օգնություն, Ուրֆայից ուղարկում են 1 դիվիզիա[2]:

1920 թվականին, քեմալականների իշխանության ամրապնդմանը և հակաքրդական քաղաքականության որդեգրմանը զուգընթաց, քրդերի շրջանում ավելի ուժեղացան հակաթուրքական տրամադրությունները, որոնք վերաճեցին զինված ելույթների: 1920 թ. մայիս-հունիսին ապստամբեց միլլի ցեղային միությունը՝ Մահմուդ Իսմայիլի, Խալիլ Բախուրի և Աբդուռահման բեյի գլխավորությամբ: Նրանք կապեր հաստատեցին անգլիացիների և ֆրանսիացիների հետ՝ ռազմական գործողությունները համակարգելու նպատակով: Այսպես, երբ ֆրանսիացիները շարժվում էին դեպի Ուրֆա, միլլի ջոկատները գրոհեցին Սիվերեկը, սակայն հունիսի 19-ին, պարտվելով թուրքական 3-րդ դիվիզիային, անցան սահմանից այն կողմ և 3-հազարանոց հեծելազորով և հազար հետևակով գրավեցին Վերանշեհիրը, բայց սեպտեմբերի սկզբներին դուրս մղվեցին այդտեղից[3]: Հուզումներ էին տեղի ունենում նաև Դերսիմում: 1920 թ. նոյեմբերին նրա կենտրոն Խոզաթում տեղի ունեցավ Դերսիմի և Շեմիշգեզեկի ղեկավարների հավաքը, որը որոշեց համախմբել ուժերը քրդերի ազգային իրավունքների նվաճման համար: Նրանք նոյեմբերի 15-ին Քեմալից պահանջեցին հայտնել իր տեսակետները՝ ինքնավար Քուրդիստանի խնդրի վերաբերյալ, բանտերից ազատել բոլոր քրդերին, քրդական շրջաններից հետ կանչել բոլոր թուրք պաշտոնյաներին ու հետ քաշել թուրքական զորքերը Կոշկիրի շրջանից[4]: Գտնվելով պատերազմի մեջ Հունաստանի և Հայաստանի հետ և չունենալով անհրաժեշտ զորքեր Դերսիմի հուզումները ճնշելու համար՝ Քեմալը ստիպված ընտրեց բանակցությունների և

[1] **Лазарев М. С.,** ***Империализм и курдский вопрос, М., 1989, с. 118.***
[2] Նույն տեղում, էջ 119:
[3] Նույն տեղում, էջ 127:
[4] *История Курдистана, М., 1999, с. 253.*

կաշառքի ուղին: 1921 թ. սկզբին ապստամբեցին Կոշգիրի քրդերը, որոնք կարճ ժամանակահատվածում գրավեցին Կանգալ, Քոջհիսար, Տիվրիկ, Զարա, Ռեֆահիե, Կուրուջայ և Քեմախի շրջանները՝ մոտ 15 հազար քառակուսի կմ տարածությամբ: Քրդերը հաշվվում էին 15 ջոկատ՝ 6 հազար մարտիկներով: Թուրքական կանոնավոր զորամասերի հետ մարտերից հետո նրանք քաշվեցին Դերսիմ՝ տալով 113 սպանված և 159 գերի[5]:

Քեմալը և նրա կառավարությունը որքան դաժան գտնվեցին սեփական երկրի քրդերի հանդեպ, նույնքան ջերմ էին վերաբերվում Իրաքի, այսինքն՝ Հարավային Քուրդիստանի քրդերին՝ նպատակ ունենալով նրանց մղել անգլիացիների դեմ ակտիվ պայքարի և վերադարձնել Մոսուլի վիլայեթը: Այս հարցում հստակություն չէր մտցրել Սևրի պայմանագիրի 64-րդ կետը[6]:

Երբ 1921 թ. թուրքական զորքերը մտան Մոսուլի վիլայեթ և գրավեցին Ռևանդուզը, բանտից ազատված Մահմուդ Բարզանին 1922 թ. սեպտեմբերին նշանակվեց Սուլեյմանիեի ընտրական խորհրդի նախագահ:Նա դարձավ «ինքնավար Քուրդիստանի» նախագահ, իսկ վարչապետ նշանակվեց շեյխ Կադերը, քրդերենը հայտարարվեց պետական լեզու, թողարկվեցին դրոշմանիշեր և դրամ, լույս տեսան քրդերեն թերթեր: Սակայն ո՛չ անգլիացիները և ո՛չ էլ իրաքյան իշխանությունները մտադիր չէին նույնիսկ ինքնավարություն տալ քրդերին: 1922 թ. Մ. Բարզանին պատվիրակություն ուղարկեց Բաղդադ՝ քննարկելու ինքնավարության հարցը: Սակայն բանակցությունները ձախողվեցին: Դրանից հետո Մ. Բարզանին փոխեց դիրքորոշումը: 1922 թ. ձմռանը նա Թուրքիայում ցեղապետերի ժողով գումարեց, որտեղ դրված էր մի հարց՝ ում հետ դաշնակցել: Ժողովուրդը եկավ այն եզրակացության, որ պետք է թուրքերի կողմն անցնել[7]:

1922 թ. նոյեմբերի 20-ին բացված Լոզանի հաշտության կոնֆերանսում քրդական հարցը ոչ ոք չբարձրացրեց. այն սահուն կերպով մտցվեց Մոսուլի վիլայեթի հարցի մեջ: Անգլիացիները կտրականապես մերժեցին Մոսուլի վիլայեթը հանձնել թուրքերին՝ հասկացնելով, որ կանգ չեն առնի անգամ նոր պատերազմի առաջ՝ Մոսուլը պահելու համար: Մուսթաֆա Քեմալը պատրաստ չէր պատերազմի և ի վերջո որոշեց Մոսուլը զիջել՝ նեղուցների հարցը իր օգտին լուծելու համար:

1919-1923 թթ. ընթացքում քեմալականները հմտորեն օգտագործեցին քրդական խաղաքարտը: 1923 թ. հունվարին քրդական ազատագրական շարժումը կանխելու նպատակով Դիարբեքիրում հիմնվեց անկախության դատարան՝ արևելյան վիլայեթների համար: 1923 թ. հոկտեմբերին ԹԱՄԺ-ը ընդունեց օրենք «Բանդիտիզմի մասին», որը պատրաստել էր Թուրքիայի ներքին գործերի կոմիսար-նախարար Ֆեթհի բեյը[8]: Այն ավելի էր խստացնում պատիժը ինչպես բանդիտիզմի, այնպես էլ դրան

---

[5] Նույն տեղում, էջ 254:
[6] **Կարօ Սասունի,** Քիւրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերութիւնները, Պէյրութ, 1968, էջ 238:
[7] *Ис2 ор, Курд, с2 ана, с. 270.*
[8] *Курдск, й альманах, Мх 2001, сх61х*

աջակցողների նկատմամբ[9]: Սակայն ամենակարևորը, իհարկե, 1924 թ. ընդունված Թուրքիայի նոր սահմանադրությունն էր, որը ներծծված էր պանթուրքիստական, ազգայնամոլ ոգով: Այն չէր ընդունում Թուրքիայում, թուրքերից բացի, այլ ազգերի գոյությունը:

Քրդական վերնախավը՝ մտավորականությունը, աղաներն ու շեյխերը և սպայությունը, հասկացավ, որ դատապարտվում է թուրք դառնալու, հակառակ դեպքում իրենց հետ կվարվեն այնպես, ինչպես հայերի հետ: Ոչ անմիջականորեն, բայց քրդերի դեմ էին ուղղված նաև սուլթանության և խալիֆայության վերացումը և վարչական նոր բաժանումը, ըստ որի՝ հին վիլայեթները վերացրեցին, իսկ նրանց սանջակներն անվանեցին վիլայեթներ, որոնք անմիջականորեն ենթարկվում էին ներքին գործերի կոմիսարին[10]:

Դեռևս 1920 թ., երբ քրդերը մենակ մնացին թուրքերի դեմ և հասկացան, որ իրենց ոչ ոք չի օգնելու, ձեռնամուխ եղան սեփական կազմակերպություն ստեղծելուն: 1920 թ. հոկտեմբերին Ջիբրան ցեղի աշիրեթապետ գնդապետ Խալիթ բեյը, Բիթլիսից պատգամավոր Ալի Ռեզան, Քեմալ Ռևզի բեյը, Շեյխ Սայիդը ստեղծեցին գաղտնի կազմակերպություն, որը 1-2 տարվա ընթացքում բավական տարածվել էր քրդական հասարակության մեջ՝ ընդգրկելով բոլոր խավերը: Այս այլազան խմբերը Ջիբրանլը Խալիթ բեյը կարողացավ 1923 թ. միավորել 1 կազմակերպության մեջ՝ «Ազադի» Քուրդիստանի անկախության կոմիտե[11]: Կազմակերպությունը գաղտնի էր և բաղկացած էր ընդհատակյա խմբերից, յուրաքանչյուրում՝ 5 հոգի: Նրանք գիտեին միայն իրենց խմբի անդամներին, իսկ մյուս խմբերից գիտեին ընդամենը 1 հոգու: Կոմիտեի ղեկավար դարձավ Ջիբրանլը Խալիթ բեյը, որը կարճ ժամանակահատվածում կարողացավ իր կողմը գրավել ցեղի առաջնորդ Հաջի Մուսային, հասանան ցեղի առաջնորդ Խալիթ բեյին և այլոց: Նրանց հաջողվեց կապեր հաստատել թուրքական բանակի քուրդ սպաների հետ: «Ազադի» կոմիտեի կենտրոնը Էրզրումն էր: Իսմայիլ Հաքքըն կենտրոնի հրահանգով կոմիտեի մասնաճյուղ հիմնեց Դիարբեքիրում: Կոմիտեի ղեկավարությունը մեծ տեղ էր հատկացնում տեղական իշխանությունների հետ կապերին, ինչպես նաև շեյխերի ու աղաների օգնության ապահովմանը: Այդ պատճառով մեծացավ շեյխ Սայիդ Նաքշբանդիի դերը կոմիտեում, որովհետև նրա ազդեցությունը տարածվում էր Խնուսից մինչև Դիարբեքիր: 1923-1924 թթ. ձմռանը Բալուում տեղի ունեցավ քուրդ ղեկավարների խորհրդակցություն, որտեղ որոշում ընդունվեց ակտիվացնել ընդհատակյա աշխատանքը, զինել ցեղերին, ինչպես նաև հասնել նրան, որ Ազգերի լիգան ճանաչի Քուրդիստանի անկախությունը:

Կոմիտեի անդամները ջանքեր էին գործադրում նաև կապեր հաստատել Քեմալին ընդդիմադիր թուրքական ուժերի հետ, որոնցից ամենահայտնին Առաջադիմական-հանրապետական կուսակցությունն էր: 1924 թ. Յուսուֆ Զիան Ստամբուլում հանդիպեց այդ և այլ ընդդիմադիր

[9] **Ataturrkun Solev ve Demecleri,** *Ankara, 1958.*
[10] **Аванесов С. С.,** *Положение нацменьшинств в Турц, , , Е., 1969, с. 54.*
[11] *История Курдистана, с. 271.*

կուսակցությունների անդամներին: Դրանից հետո նա մեկնեց Էրզրում, որտեղից ծածկագրված հեռագիր ուղարկեց հիշատակված դիվիզիա, իր եղբայր Ռիզային, որը որպես սպա ծառայում էր այդտեղ: Այս ծածկագրված հեռագիրը քուրդ սպաները սխալմամբ ընդունեցին որպես ապստամբության ազդանշան և իրենց զորամասերով ապստամբեցին՝ հեռանալով լեռներ: Բանից անտեղյակ քրդական ցեղերը նրանց չաջակցեցին, և ապստամբ ղեկավարները ստիպված ցրեցին զինվորներին, ապա անցան Սիրիա, այնտեղից էլ՝ Իրաք:

Այս անհաջող փորձը, ինչպես նաև երկրով մեկ քուրդ պատգամավորների, սպաների, շեյխերի ու աղաների տեղաշարժերը չէին կարող վրիպել թուրքական իշխանությունների աչքից: Քեմալի հրամանով 1924 թ. հոկտեմբերին ձերբակալվեցին Յուսուֆ Զիան, Հաջի Մուսան, ևս 20 ղեկավար, իսկ դեկտեմբերի 24-ին՝ նաև Զիբրանը Խալիթ բեյը: Այս ձերբակալություններից հետո կոմիտեի նախագահ ընտրվեց Շեյխ Սայիդը: Կայացած խորհրդակցությունում որոշում ընդունվեց անհապաղ սկսել ընդհանուր ապստամբություն և ազատել ձերբակալված ընկերներին:

Կոմիտեն հանձնարարեց շեյխ Սայիդին՝ գրավել Դիարբեքիրը և կապ հաստատել Սիրիայի քրդերի հետ: Շեյխ Սայիդը հրամայեց Հասանանը Խալիթ բեյին գրավել Բիթլիսը և ազատել ձերբակալվածներին, իսկ ինքը 1924 թ. դեկտեմբերի 27-ին մեկնեց Բալու: Դրանից մեկ ամիս առաջ Ալի Ռիզան կարողացել էր Հալեպում հավաքել Սիրիայի, Թուրքիայի, Իրաքի քուրդ ազդեցիկ դեմքերին, որոնք որոշում էին կայացրել Թուրքիայում ապստամբությունը սկսել 1925 թ. հունիսին[12]: Ալի Ռիզան Հալեպի խոր-հրդակցությունից մեկ շաբաթ անց Ստամբուլում հանդիպեց Սայիդ Աբդուլ Կադիրին և պատմեց Հալեպի խորհրդակցության, ինչպես նաև թուրքական Քուրդիստանում տիրող իրավիճակի մասին: Սայիդ Աբդուլ Կադիրն էլ իր հերթին տեղակացրեց, որ ինքը երկար ժամանակ է, ինչ բանակցում է անգլիական դեսպանության ներկայացուցչի հետ, և եթե բանակցությունները հաջող ընթանան, ինքն անձամբ կգա Քուրդիստան՝ ապըս-տամբությունը համախմբելու համար: Ալի Ռիզան Ստամբուլում և Անկարայում հանդիպելու էր Քեմալին ընդդիմադիր թուրքական ուժերի հետ: Նա նաև տեղեկացրեց Հալեպի ժողովի մասնակիցներին, որ ապստամբությունը սկսվելուց հետո կդիմի Ազգերի լիգա: Նա փորձեց իր կողմը գրավել ղզլբաշների խորմեկ ցեղին, սակայն նրա ցեղապետերը խորհրդակցության ժամանակ ոչ միայն դեմ արտահայտվեցին ապստամ-բությանը, այլև որոշեցին ամեն կերպ խանգարել դրան և շեյխ Սայիդի նամակն էլ ուղարկեցին Վարդոյի թուրք կայմակամին: Ձախողվեցին շեյխի փորձերը՝ ապստամբության մեջ ներգրավել նաև Դերսիմի և Մուշի քրդերին:

1925 թ. հունվարի 8-ին շեյխ Սայիդի մոտ կայացած խորհրդաժողովը որոշում կայացրեց սկսել ապստամբությունը, գրավել Դիարբեքիրը, Բիթլիսը, Երզնկան, իսկ այնուհետև շարժվել դեպի Իրաք՝ շեյխ Մահմուդ Բարզանիին միանալու համար:

[12] **Կարո Սասունի,** նշվ. աշխ., էջ 245:

1925 թ. հունվարի 9-ին շեյխ Սայիդը ուղևորվեց Գենչ, Լիջե և Խանի, որտեղ հանդիպեց տեղի քուրդ առաջնորդներին, իսկ փետրվարի 5-ին հարյուր հեծյալի ուղեկցությամբ գնաց Փիրան՝ իր եղբայր շեյխ Աբդուռահմանի մոտ: Հենց այստեղ էլ պատահեցին այն դեպքերը, որոնք ստիպեցին ավելի շուտ սկսել ապստամբությունը: Նույն օրը երեկոյան գյուղ եկավ 15 թուրք ժանդարմ, որոնք պահանջեցին շեյխ Սայիդից իրենց հանձնել սպանության մեջ կասկածվող 10 քրդերի: Պահանջը մերժվեց, և գործը հասավ փոխհրաձգության. մի քանի ժանդարմներ սպանվեցին, մնացածներն էլ սպայի հետ գերի վերցվեցին: Շեյխ Սայիդը չէր ուզում, որ ապստամբությունը սկսվի, քանի որ կարծում էր, որ դեռ անպատրաստ են, և գնաց Գենչ, որ միջադեպը ինչ-որ կերպ հարթի: Սակայն նրա եղբայր շեյխ Տախան, իմանալով Փիրանում տեղի ունեցած դեպքի մասին, հարձակվեց Լիջեյի փոստի վրա և փետրվարի 11-ին եկավ Գենչ՝ Սայիդի մոտ բերելով փաստաթղթերն ու փողերը: Նա ստիպված էր ապստամբություն բարձրացնել և փետրվարի 14-ին 10 հազար ապստամբներով գրավեց Գենչը: Շեյխ Սայիդը հրապարակեց արտակարգ օրենք, ըստ որի՝ Քուրդիստանի ժամանակավոր մայրաքաղաք էր հռչակվում Գենչը, ամբողջ իշխանությունը անցնում էր նրա ձեռքը: Նոր հրամանով վերացվում էր «աշար» հարկը, որի փոխարեն կոչ էր արվում ապահովել ապստամբներին սննդամթերքով: Ապստամբության ղեկավար դարձավ շեյխ Սայիդը, նրա տեղակալ՝ Ֆաքի Հասանը, որի նստավայրն էր Գենչը: Շեյխ Սայիդը պետք է իր ուժերը կենտրոնացներ Թելյալում՝ դեպի Դիարբեքիր հարձակման համար: Դիարբեքիրը կարևոր էր երկու առումով: Նախ՝ քրդերը դիտում էին Դիարբեքիրը՝ որպես իրենց ապագա պետության մայրաքաղաք, և երկրորդ, գրավելով այն՝ ապստամբները կարող էին կապեր հաստատել արտասահմանի հետ՝ հույս ունենալով ստանալ զենք և օգնություն: Սայիդը ստանձնեց Հաջի Հասանի, Օմեր Ֆարոյի, ինչպես նաև միարան և բոթան ցեղերի ջոկատների հրամանատարությունը, Իսյանի լեռնանցքով գնաց Դիարբեքիր, որի մոտակայքում փետրվարի 28-ին նրան միացավ շեյխ Շամսէդդինի մեծաքանակ ջոկատը: Ապստամբների թիվը հասավ 20 հազարի: Նրա եղբայրը շեյխ Էյուբի հետ հարձակվեց Էրգանի վրա:

Սկզբում թուրքական կառավարությունը չէր գիտակցում պահի լրջությունը: Այսպես, փետրվարի 20-ին ԹԱՄԺ-ում Թուրքիայի վարչապետ Ֆեթհի բեյը հայտարարեց, թե հայտնվել է մի ավազակ շեյխ, որը խռովություն է բարձրացրել[13]: Սակայն Քեմալը անմիջապես հասկացավ դրության լրջությունը և շտապ Ստամբուլից Անկարա հրավիրեց Իսմեթ փաշային (Ինոնյու)[14]: Եվ մինչև 1925 թ. մարտի 3-ը, այսինքն՝ Իսմեթ փաշայի վարչապետ նշանակվելը, ռազմական հաջողությունը քրդերի կողմն էր: Հաջորդ օրը՝ մարտի 4-ին, ԹԱՄԺ-ն ընդունեց իր 578-րդ օրենքը՝ կարգուկանոնի պահպանության մասին, որն արտակարգ լիազորություն էր տալիս իշխանություններին՝ ժողովրդական ելույթների և երկրում ամեն տեսակ ընդդիմադիր գործունեության դեմ մղվող պայքա-

[13] **Metin Toker,** *1925 Kırt ayaklanmas ve Seit sait ayaklanmas, Istanbul, 1985, p, 58:*
[14] *Atatırkın solev ve Demegleri, Ankara, 1958, s. 72.*

րում[15]: Թուրքերը ստիպված էին ռազմական դրության մեջ պահել ութ-ինը դիվիզիա, պահեստազորից զորակոչվեցին վերջին հինգ կրտսեր տարիքի պահեստազորայինները: ԹԱՄԺ-ն ապստամբած շրջաններում մեկ ամսով հայտարարեց արտակարգ դրություն, որը հետո երկարաձգվեց վեց ամսով[16]:

Թալայում շեյխ Սայիդը իր ապստամբության անհրաժեշտությունը հիմնավորեց ոչ թե անկախ Քուրդիստան ստեղծելու, այլ Անկարայի «անհավատներից» կրոնը պաշտպանելու համար, ինչը վանեց շատ քրդական ցեղերի և դերվիշական միաբանությունների՝ հատկապես զազաներին, ղզլբաշներին, ալևիներին, քանի որ նրանք չէին ուզում կռվել Նաքշբանդի միաբանության շեյխի հրամանատարության տակ: *Իսկ* անկախ Քուրդիստանի գաղափարը կմիավորեր բոլորին: Սա շեյխ Սայիդի մեծ սխալն էր: Պաշարելով Դիարբեքիրը՝ 1925 թ. մարտի 11-ին քրդական ջոկատները հարձակման անցան: Գիշերը, օգտագործելով գաղտնի թունելները, քրդերը մտան քաղաք՝ Մարդինի դարպասներով: Թուրքերն ամրացան միջնաբերդում, և մի քանի ժամվա մարտերից հետո քրդերը, տալով մոտ 150 սպանված, թողեցին քաղաքը կամ ցրվեցին տներով: Դիարբեքիրի անհաջող գրոհից հետո շեյխ Սայիդը ստիպված դադարեցրեց պաշարումը և նահանջեց Սիվերեկ: Այստեղ նա մարտի 20-ին 300 ձիավորով մարտ տվեց իր դեմ շարժվող թուրքական հեծյալ դիվիզիոնի և զազաների ջոկատի դեմ ու հաղթեց: Գերի ընկավ 80 զազա:

Սակայն չնայած այսպիսի մասնակի հաջողություններին՝ ընդհանուր վիճակը գնալով վատանում էր: Հյուսիսից ապստամբների վրա էր շարժվում 40, իսկ հարավից՝ 30 հազար թուրք զինվոր[17]:

Վախենալով Թուրքիայում բռնկված քրդերի պայքարի ծավալումից՝ Անգլիան և հատկապես Ֆրանսիան օգնություն ցույց տվեցին Քեմալին: Ֆրանսիան համաձայնվեց, որ թուրքական զորքերը երկաթգծով նետվեն Մարդին՝ ապստամբների թիկունքը՝ նրանց նահանջի ճանապարհը փակելու համար[18]: Իսկ Անգլիայի խորհրդով և օգնությամբ թուրքերը քրդերի դեմ սկսեցին կիրառել 16 ռազմական օդանավեր, հատկապես ռմբակոծիչներ, որոնք ի վիճակի էին ռմբակոծել նաև գիշերը[19]: Իսմայիլ Հաքքը նշում է, թե թուրքերի ուժերը հասնում էին մոտ 200000-ի, սակայն ավելի հավանական էր 120000-ը, ներառյալ՝ օգնական քրդական ուժերը: Թուրքերի ճնշման տակ շեյխ Սայիդը նահանջեց դեպի Իսյանի ձորը, որտեղ նրան միացան Էրգանից ծանր կորուստներով նահանջող Աբդուռահմանի ջոկատները: Ոչ երկարատև մարտերից հետո նրանք ստիպված նահանջեցին Դարահին, և մարտի 27-ին թուրքական 9-րդ կորպուսը գրավեց Էլյազիգը և Վարդոն՝ փակելով ապստամբների ճանապարհը դեպի Իրաք և Սիրիա[20]: Մինչ այդ շեյխ Շեֆին, որը փետրվարի 21-ին գրավել էր Բալուն, իսկ մարտի 5-ին՝ Էլյազիգը,մարտի

---

[15] **Metin Toker,** *1925 Kırt ayaklanmas, Istanbul, 1985, s. 101.*
[16] **Никитин В.,** *Курды, М, 1964, с. 165.*
[17] **Гасратян Н.,** *Курды Турции в новейшее время, Е., 1990, с. 137.*
[18] **Կարօ Սասունի,** նշվ. աշխ., էջ 248:
[19] **Olson R.,** *The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, Austin,1998, p. 10.*
[20] **Metin Toker,** *1925 Kurt ayaklanmas ve Seit sait ayaklanmas, Istanbul, 1985, s. 84.*

6-ին հանդիպեց ԹԱՄԺ-ի պատգամավոր դերսիմցի Հասան Խայրիի հետ: Թվում էր, թե Դերսիմը կմիանա ապըստամբությանը, սակայն անհաջող գրոհից հետո Դերսիմի ղեկավարները մարտի 16-ին հայտնեցին իրենց հավատարմությունը թուրքական կառավարությանը և տվեցին նրան օգնական ջոկատներ: Իսկ երբ թուրքերը արշավում էին Էլյազիգ, և շեյխ Շեֆին ցանկանում էր պաշտպանել այն, Դերսիմի և Էլյազիգի քրդերը Դողանդեդեօղլու Հուսեյնի գլխավորությամբ թիկունքից հարվածեցին շեյխ Շեֆիի ուժերին: Դրա հետևանքով ապրիլի 1-ին ապստամբները նահանջեցին Բալուի ուղղությամբ, որին մոտենում էին Քյազըմ փաշայի ուժերը: Ապստամբները Մենդոյի կիրճում ծուղակ պատրաստեցին, որի մեջ ընկավ Քյազըմ փաշայի 5-րդ դիվիզիան, որը, չնայած ծանր կորուստներին, կարողացավ կիրճից դուրս մղել քրդերին, որոնք ցրվեցին տեղի անտառներում: Շեյխ Շեֆին մի քանի զինվորներով նահանջեց Ճապաղջուր, որ միանա շեյխ Սայիդին: Սակայն ապրիլի 6-ին Քյազըմ փաշայի 5-րդ դիվիզիայի զորամասերը մտան Ճապաղջուր: Շեյխ Սայիդը 300 ձիավորով նահանջեց դեպի Սոլխան: Այստեղ նրանց միացան ապստամբական ղեկավարներ՝ շեյխեր Մուսթաֆան և Իբրահիմը, որոնք դեռ փետրվարի 20-ին Քղիում երկուհազարանոց ջոկատով թուրքական 8-րդ կորպուսի զորամասերին ծանր կորուստներ պատճառելուց հետո ստիպված էին նահանջել խորմեկ ցեղի՝ թիկունքից հարվածելու պատճառով: Ապրիլի 5-ին Կարլըօվա հարթավայրում թուրքական 8-րդ կորպուսը խորմեկ ցեղի աջակցությամբ պարտության մատնեց ապստամբներին, որոնց մնացորդները ապրիլի 6-ին Սոլիանի մոտ միացան շեյխ Սայիդին:

Ապստամբական 4-րդ շրջանը ղեկավարում էին շեյխ Աբդուլահը, գընդապետ Հասանանլը Խալիթ բեյը, Ալի Ռեզան և ջիբրան ցեղի աղաները: Ապստամբության սկզբում նրանք գրավեցին Սոլիանը, Վարդոն, Մանազկերտը, Մուշը: Վարդոն գրավելուց հետո մարտի 16-ին շեյխ Աբդուլահը 100 ձիավորով շարժվեց դեպի Արփաղերեսի կիրճը, որտեղ սակայն կանգնեցվեց խորմեկ, չերեկ ցեղերի և Խնուսի թուրք ժանդարմների կողմից: Մարտի 19-ին Ջիբրանլը Խալիթի եղբայրները՝ Սելիմը և Ահմեդը, 200 ապստամբով թողեցին Վարդոն և Մանազկերտում միացան Հասանանլը Խալիթ բեյին: Այսպիսով, ապստամբները չկարողացան գրավել Բիթլիսը և ազատել Ջիբրանլը Խալիթ բեյին, Յուսուֆ Զիային և այլոց: Մուրադ գետի կամրջի մոտ ճակատամարտից հետո նրանք բոլորն էլ գնդակահարվեցին:

Իմանալով այդ մասին՝ ջիբրան ցեղը և շեյխ Աբդուլահը, որոշելով վրեժ լուծել, հավաքեցին բավականաչափ ուժեր և մարտի 20-ին ծուղակ պատրաստեցին Սյոյլեմեզ (Խնուս) գյուղի մոտ ու ջախջախեցին 12-րդ դիվիզիայի 34-րդ գունդը: Սակայն ուժերն անհավասար էին, և օգնության հասած դիվիզիայի մյուս գնդերը ստիպեցին քրդերին նահանջել: Երկու օր անց նորից ճակատամարտ տեղի ունեցավ Արփաղերիսի մոտ, որտեղ քրդերը նորից նահանջեցին: Հասանանլը Խալիթ բեյը 1000-հոգանոց հեծելազորով փորձեց գրավել Խնուսը, բայց անհաջող և ստիպված նահանջեց արևելք: Կարաքյոսեռում գտնվող թուրքական ուժերը և հայդարան ցեղերը ստիպեցին նրանց նոր ճակատամարտ տալ, որտեղից պարտված Հասանանլը Խալիթ բեյը ստիպված անցավ Իրան, ուր նրան պարտության մատնեցին իրանական կառավարական զորքերը: Սպանվե-

ցին Խալիթ բեյի և շեյխ Սաիդի որդիները և շատ այլ ղեկավարներ: Այդ ճակատամարտից հետո Հասանանլը Խալիթ բեյը և Ալի Ռեզան միացան Իսմայիլ աղա Սմկոյին:

Այդ օրերին էլ թուրքական հրամանատարությունը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում էր, որ շեյխ Սայիդին ողջ հանձնողին խոստանում է 1000 լիրա, մեռածի համար՝ 700 լիրա: Թուրքական զորքերն անընդհատ հարձակվում էին, և Սայիդը ստիպված էր նահանջել Գենչ, որտեղից էլ սկսվել էր ապստամբությունը: Այստեղ՝ Գենչի գոգահովտում, ապստամբները շրջապատվեցին և ջախջախվեցին, իսկ նրանց ղեկավարները՝ շեյխ Սայիդը, Աբդուլլահը և էլի 29 ղեկավարներ, Մուրադ գետի Չարփոխ կամրջի վրա գերի ընկան[21]: Ապստամբների ջոկատները նահանջեցին Շարաֆուտդինդաղ լեռնաշղթայից այն կողմ (Մուշից 45 կմ հս.-արմ.), որտեղ նորից շրջապատվեցին և ոչնչացվեցին: Գերի ընկածներին տարան Դիարբեքիր, որտեղ նրանց կանգնեցրին անկախության դատարանի առաջ: 1925 թ. հունիսի 29-ին դատարանը 47 ղեկավարների, որոնց թվում և շեյխ Սայիդին դատապարտեց մահվան՝ կախաղանի միջոցով: Հաջորդ օրը դատավճիռը ի կատար ածվեց[22]: Օգտվելով առիթից՝ քեմալականները մահապատժի ենթարկեցին նաև քուրդ մտավորականության ներկայացուցիչներին, որոնք չէին մասնակցել ապստամբությանը, օրինակ՝ շեյխ Ուբեյդալլահի որդի Աբդուլ Կադիրին և նրա որդուն՝ բանաստեղծ Քեմալ Ֆեզի բեյին, փաստաբան Ռեֆիգ բեյին և էլի 200 ազդեցիկ քրդերի[23]:

Շեյխ Սայիդի ապստամբությունը ազգային-ազատագրական պայքար էր, սակայն այս շարժման մեջ շատ կարևոր էր հոգևորականների դերը, որն ավելի մեծացավ նրա աշխարհիկ ղեկավարների ձերբակալումից հետո: Քուրդ շեյխերը և ժողովրդի մեծ մասը չընդունեցին Մուսթաֆա Քեմալի և նրա որդեգրած էթաթիզմի և լաիցիզմի քաղաքականությունը և որակեցին նրան որպես իսլամը անարգողի և անհավատի: Ապստամբության մեջ իսլամ հոգևորականների մասնակցությունը հմուտ կերպով օգտագործեցին քեմալականները՝ քրդական շարժումը որպես հետադիմական երևույթ ներկայացնելու համար:

Մյուս գործոնը քուրդ ֆեոդալների և շեյխերի վախն էր, որ հանրապետական Թուրքիայում իրենք կկորցնեն իրենց հողերը, արտոնությունները, ազդեցությունը և ի վերջո՝ իշխանությունը:

Մեծ էր հայերի և հատկապես իսլամ ընդունած հայերի մասնակցությունը այս ապստամբությանը: Թուրքական պատժիչ ջոկատները հաշվեհարդար էին տեսնում հայերի հետ՝ հաշվի չառնելով մասնակցե՞լ են նրանք ապստամբությանը, թե՞ ոչ: Դիարբեքիրի և Անկարայի Անկախության դատարանները մահվան էին դատապարտում յուրաքանչյուր հայի, ով հայտնվում էր մեղադրյալի աթոռին՝ առանց հաշվի առնելու մեղքը կամ մասնակցության չափը:

Շեյխ Սայիդի ապստամբության պարտության պատճառները ներքին և արտաքին են, ռազմական և քաղաքական:

---

[21] *История Курдистана, с. 274.*
[22] Նույն տեղում, էջ 275.
[23] **Կարո Սասունի,** նշվ. աշխ., էջ 250:

Ապստամբության պարտության ներքին պատճառը նրա ցեղային սահմանափակությունն էր: Ապստամբության ղեկավարներին չհաջողվեց շարժման մեջ ներգրավել քաղաքների բնակիչներին, որոնց մեծ մասը, վախենալով ապստամբների բռնություններից ու կողոպուտներից, համագործակցում էր թուրքերի հետ:

Ռազմական առումով քրդերը անկազմակերպ էին, չունեին կանոնավոր զորամասեր, վատ էր համագործակցությունը և կապը ջոկատների միջև: Մինչդեռ թուրքերը օգտագործում էին մարտական ինքնաթիռներ, շատ արդյունավետ էր աշխատում նրանց հրետանին, լավ էր աշխատում կապի ծառայությունը, իսկ քրդերի տարածքում հեռագրալարերը կտրված էին, քրդական շատ քաղաքներ ընդհանրապես չունեին հեռագրական կապ: Թուրքերի վերահսկողության տակ եղած տարածքներում զարգացած էր երկաթուղային ցանցը, ինչը հնարավորություն էր տալիս նրանց կարճ ժամանակահատվածում խոշոր զորամիավորումների համալրումներ նետել ռազմաճակատի կարևոր հատվածներ՝ Թուրքիայի արևմուտքից:

Ապստամբության պարտության արտաքին պատճառներն այն էին, որ մերձավորարևելյան բոլոր պետությունները ցանկանում էին ջախջախել այդ ապստամբությունը, քանի որ վախենում էին իրենց տարածքներում բնակվող քրդերի ելույթներից: Ֆրանսիան ևս ոչ միայն դեմ էր ապստամբությանը, այլև թույլ տվեց, որ Սիրիայի տարածքով թուրքական զորքերը երկաթուղով տեղափոխվեն Մարդին՝ քուրդ ապստամբների թիկունքը, որ պարտված ապստամբները չանցնեն Սիրիա: Նույն քաղաքականությունն էր վարում Անգլիան, որի շնորհիվ Թուրքիան սկսեց օգտագործել մարտական ինքնաթիռներ: Իրանը նույնպես բացասաբար ընդունեց շեյխ Սայիդի ապստամբությունը: Ավելին, երբ պարտված ապստամբները նահանջեցին Իրան, կառավարական զորքերը նոր պարտության մատնեցին նրանց, հաշվեհարդար տեսան գերիների հետ, ողջ մնացածները մի կերպ փախան Իրաք: Թվում էր, թե Խորհրդային Միությունը կողջունի քրդական այս հեղափոխությունը, սակայն խորհրդային կառավարությունը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ դատապարտում էր հետադիմականներին ու Անտանտի գործակալներին և իր աջակցությունը հայտնում քեմալական կառավարության ձեռնարկած քայլերին:

КУРДСКАЯ ПОЛИТИКА МУСТАФЫ КЕМАЛЯ И ВОССТАНИЕ ШЕЙХА САИДА В 1925 Г.

САИсН А. С.

Резюме

ПослеяМЗдросскогояперемирияя1918яг., , сходяя, зяопасен, я,ячтоянаселенныеякурдам, я районыя будутя отданыя Армен, , ,я ка, рск, йя “Ком, тетя незав, с, мост, я Курд, стана”,я возглавляемыйя Сурехьяя Бадрханом,я направ, ля вя Пар, жя Шер, фа—пашуя Нея , меяя поддержк, я со стороны держав Антанты, Шер, ——паша вынужден был

объединитьс с арм нской делегацией. Объединенна арм но—курдска делегаци смогла добитьс согласи держав Антанты на создание независимого Курд, стана,я чтоя былоязакреплено в с2а2ь х 62, 63 , 64 Севрского договорах Однако пр, ход к влас2, в Т3рц, , М3с2афы Кемал , завоеван, е Закавказь Сове2ской Росс, ей внесл, , зменен, в бл, жневос2очн3ю пол, 2, к3 Англ, , , Франц, , х С2ара сь не доп3с2, 2ь союза межд3 Т3рц, ей , Росс, ей, Ан2ан2а пошла на 3с23пк, М3с2афе Кемалю, в 2ом ч, сле , по к3рдском3 вопрос3х С повес2к, Лозанской конференц, , был сн 2 к3рдск, й вопросх После Лозанской конференц, Мх Кемаль о2рекс о2 сво, х обещан, й — да2ь к3рдам ав2оном, ю — , с2ал провод, 2ь более жес2к3ю пол, 2, к3 асс, м, л ц, , , нежел, младо23рк, х В 2ак, х 3слов, х к3рды поспеш, л, объед, н, 2ьс , воор3женным восс2ан, ем доб, 2ьс незав, с, мос2, х Сяэ2ойяцельюявя1923гэянаяосновеянесколькиэяк3рдф ск, э ком, 2е2ов был содзан ком, 2е2 “Азад, "э Его возглав, л, как предс2ав, 2ел, племенныэ вождей, 2ак , , н2елл, генц, , э Ком, 2е2 с2ал го2ов, 2ьс к восс2ан, ю, ко2орое вспыэн3ло в феврале 1925 года под предвод, 2ельс2вом шейэа Са, да, однако вскоре повс2анцы по2ерпел, поражен, еэ